

## ՀԱՅ ԿԵՐՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԳԼՈՐԴ Ե. Ի. ԲՆԴՈՒԵՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԷԶՄԻԱԾՆՈՒԹԻՄ ԵՒ ՕԾՈՒՄԸ.**

Յունիս 24-ին Տեղապահ Յուսիկ արքեպիսկոպոսի աշնունով եկած հեռագրից լուսացուեց, որ Վեհափառ Հայրապետը էջմիածին պիտի ժամանէ ամսի 26-ին, ճաշից յետոյ 3½-ին։ Խուրը տարածուելուն պէս թէ Վանքի միաբանութիւնը, թէ ձեմարանը և թէ Վաղարշապատի հասարակութիւնը սկսեցին պատրաստութիւններ տեսնել Վեհին ըստ արժանոյն ընդունելու համար Վանքում որոշուել էր, որ Վեհափառին պիտի դիմաւորեն էջմիածին կայարանում Սինոդի անդամները՝ Յուսիկ արքեպիսկոպոս, Սահակ, Յուսիկ, Բարդէն վարդապետները, Սահակ արքեպիսկոպոս Այվատեանը, Վանական կառավարութեան նախագահ Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանը և Խաչիկ ու Սիօն վարդապետները՝ իրքե կաթուղիկոսական խորհրդանիշները կոողները, Խոկ Վաղարշապատի հասարակութիւնը որ առաջ ընտրել էր իւր միջից պատգամաւորներ Վեհափառին ընդառաջ գնալու և դիմաւորելու համար, ինչպէս նաև մի կարգադրիչ յանձնաժողով՝ ընդունելութեան ժամանակ կարդ ու կանոնի վերայ հոկելու և գիւղի հասարակութեան կողմից յաղթական կամար կանգնեցնեցնելու գործը զեկավարելու համար, միւս կողմից ձեմարանն ես, ցանկանալով իւր Վեհափառ Խնամակալին և բարձր Հովանաւորին շքով ընդունել, որոշել էր մի յաղթական կամարով ընդառաջ դուռս գալ և իրօք, ձեմարանի գարբատի առաջին գլխաւոր փաղոցի վերայ, որտեղով պիտի անցնէր Վեհափառը, կանգնեցրած էր գոյն գոյն գրոշակներով զարդարուած, թարմ ճիւղերից և սատերից հիւսուած գալարուն չղթաներով պատած մի հոկայեական երյարկանի յաղթական կամար, որի վերին յարկի

վերայ ամբացրած էր Դ. Ե. Կ. տառերը՝ թարմ ու բազմահօտ ծաղիկներից հիւսած, իսկ երկրորդ կամարի վրայ կիսաշրջանաձև կտրած սպիտակ քաթանի վերայ դրուած էր. «Բարի վերադարձ ձեմարանի սիրեցեալ Նայրապետին»: Առանձին խորհրդաւորւթիւն էին տալիս կամարին սիւների ծայրերին դրած երկու խուրձ ցորենը՝ գերանդիները միջին որոնք նշան էին տարուայ հացի առառութեան և այն բանի, որ Վեհի գալուստը հնձի ժամանակնէ. ընդհանուր տեսարանը լրիս կացւցանելու համար գիւղացի խանութպաններն ու տնատէրերն ևս զարդարել էին իրենց խանութների ճակատներն ու բնակարանները. ամբողջ ճանապարհը ծածկուած էր ծաղիկներով, խոտերով և կանաչ ոստերով, իսկ տների պատշգամբները՝ խալիչաներով ու գորգերով։ Հրապարակի վերայ, վանքի մուտքի գիւղացը կանգնեցրած էր հասարակութեան կամարը՝ շինուած տարբեր ոճով և զարդարուած նոյնպէս ծաղիկներով ու կանաչ տերեներով, կամարի վերայ դրուած էր «Բարի գալուստ»։

Երկու օրուայ ընթացքում՝ արդէն բոլոր պատրաստութիւնները տեսնուած էին, ամենքն անհամբեր սպասում էին ժամի երեքին, երբ պիտի ընդունէին ուղիղ 28 օր Էջմիածնից բացակայող Վեհափառ Գահակալին. այդօրը Վաղարշապատը մի առանձին կենդանութիւն էր ստացել, ամեն տեղ կեանքը եռում էր։ Մոտ ժամը 12-ին միարանութեաններկայացուցիչները, Վաղարշապատի պատգամաւորները, գաւառապետ Լեմերմանը և բազմաթիւ մասնաւոր մարդիկ՝ կանաչ տերեներով զարդարուած կառքեր նոտած շտապեցին կայարան Վեհափառին դիմաւորելու, քիչ չէր նաև ձիաւորների թիւը։

Ժամը 2-ին Վեհի արտակարգ գնացքը կանգ առաւ Էջմիածին կայարանում ուռաների և կեցցէների աղաղակների տակ, Միաբանութեան կողմից գնացողներին և պատգամաւորներին Վեհափառն ընդունեց Սալօն-վագօնում, որից յետոյ իւր շքախմբով իջաւ կայարանի սենեակը և ընդունեց մասնաւոր մարդկանց, որոնք եկել էին դիմաւորելու, քիչ չէր նաև ձիաւորների թիւը։

Հորելու։ Մի քանի բռպէ հանգստանալուց յետոյ Նորին Վեհափառութիւնը նստեց փակ կառք և մեկնեց եղմիածին։ Կայարան եկած կառքերի թիւը ահագին էր. առաջից գնում էին մի քանի մասնաւոր կառքեր ու ձիաւոր ների խմբեր։ իսկ իսկական շքերթի առաջընթացն ու թաճվերան էր ալ. Գաւառապետը. սրան հետեւում էին Խաչիկ ու Սիօն վարդապետները՝ ձեռքերին բռնած կա՛թողիկոսական խորհրդանիշները. իսկ սրանց հետեւում էին շքախմբի անդամներն ու շքախմբին ճանապարհին միացած հոգեորականներն. ապա գալիս էր Վեհափառ Հայրապետի փակ կառքը՝ շրջապատուած պահակներով. իսկ սրանցից անմիջապէս յետոյ դիւանապետի կառքն էր։ Այսպիսի կարգաւորութեամբ շքերթը առաջին անգամ կանգ առաւ Ղարխուն դիւղի սահմանում, ուր դիմաւորելու էին դուրս եկել մահմեդական հասարակութիւնը իրենց հոգեոր պետի առաջանորդութեամբ. իսկ հայարնակ Խաթունարիս դիւղի հասարակութիւնը դիմաւորեց Վեհին քահանայի առաջնորդութեամբ։ Ճանապարհի համարեա ամբողջ ընթացքում հնձւորները իրենց ցորենի խրձերով էին դիմաւորում և բարի գալուստ մաղթում Վեհին։ Փամը Յի մօտերքին Մայր Տաճարի զանգերի զօղանջիւնը աղդարարեց միաբանութեան ու ժողովրդին, որ նորին Վեհափառութիւնը մօտենում է եղմիածին. մի քանի բռպէից յետոյ երեացին կառքերի անվերջ շարքերը՝ բերելով շքախմբի անդամներին, որոնք անցան առաջին կամարի տակով. վերջապէս երեաց Վեհի փակ-կառքը իւր գեղեցիկ ձիերով. օդը թնդաց ուռաների և կեցցէների ձայնից, կամարի տակ կանգ առաւ նորին Վեհափառութեան կառքը։ Ճեմարանի ուսուցիչները, պաշտօնեաներն և աշակերտ-ուսանողները կանգնած էին ճանապարհի վերայ երկկարգ. սրանց կողմից բարի վերադարձ մաղթեց ալ. Մանուկ Արեղեանը՝ ասելով հետեւալլ. «Վեհափառ Տէր, Ճեմարանի կողմից չնորհաւորում եմ Զեր բարի վերադարձը, ցանկանալով Զեր առողջութիւն և բարեփառ կաթողիկոսութիւն ի փառս Հայաստանեայց եկեղեցւոյ և

հայ ժողովրդից Վեհափառը շնորհակալութիւն յայտնեց և թոյլ տուեց ուսուցիչներին և սպաշտօնեաներին համբուրելու իւր աջը, որից յետոյ կաթուզիկոսական շքերթը առաջ անցաւ և կանգ առաւ գիւղի հրապարակում կանգնեցրած յաղթական կամարի առաջ, որտեղ գիմաւորելու էին դուրս եկել վանքի ամբողջ միաբանութիւնը, երբ այստեղ նորին Վեհափառը կառքից ցած իջաւ նրան դիմաւորեց գիւղի տանուտէրը և խնդրեց ընդունել աղ ու հաց։ Տանուտէրից յետոյ ողջունի ճառ արտասանեց Վաղարշապատի հասարակութեան կողմից պ. Կ. Գառնեանը Վեհափառը շնորհակալութիւն յայտնելով ժողովրդին՝ մտաւ ամպհովանու տակ, որ տանում էին հասարակութիւնից ընտրուածները։ Այստեղից սկսուեց եկեղեցական թափորը, մի կողմից եկեղեցու զանգերի միահամուռ ձայնը, ժողովրդի օվացիաներն ու աղազակները միախառնուելով «Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողութեան հետ, միւս կողմից հաղարաւոր ժողովրդի բուռն հետաքրիքութիւնն ու բարձր տրամադրութիւնը, շուրջառազգեատ հոգեւորականութեան յամրաքայլ երթը զուգագիտուելով միմեանց հետ առանձին շուք, վեհութիւն և խորհրդաւորութիւն էին տալիս գնացքին։ Ժողովուրդը՝ կենդանի պարիսպ կազմած՝ երկիւղկուել էր, բաց անելով ճանապարհ հայրապետական գնացքի համար, որի առաջից գնում էին երգիչների խումբը, ապա զուգահեռաբար հայրապետական խորհրդանիշները կրող Խաչիկ ու Սիօն վարդապետները, իսկ որանց հետևում էին խաչ ու խաչվառակիրները՝ երկկարգ, այնուհետեւ հոգեւորական դասը՝ սկսած քահանաներից, վերջացրած Սուբիաս սրբազնութիւնը աջ կողմից, իսկ ներսէս սրբազնութիւնը ձախից, ապա գալիս էր Վեհափառը՝ ամպհովանու տակ մտած։ իսկ Վեհանին անմիջապէս հետևում էին գիւղանապետ Բագրատ և Սինօդի անդամ Մատթէոս վարդապետը, իսկ որանցից յետոյ զուգահեռակարգ շղթայ կազմած գալիս էր ժողովուրդը՝ անվերջ կեցցէներ ասելով։ Կամարի գլխին կանգնած մանկահասակ օրիորդները թարմ ծաղիկներ էին

սփռում Վեհի սովերի տակ, կամարի տակից անցնելիս ամբողջ ճանապարհը՝ հրապարակից մինչև Տրդատայ գըռ-ները, ծածկուած էր կանաչ խոտով, իսկ Տրդատայ գըռ-ներից մինչև Մայր Տաճարը փռուած էր կարմիր մահուգ, որի վերայով անցնելով Վեհափառը մտաւ եկեղեցի։ Իջ-ման սեղանի առաջ ծնկաշոք աղօթելուց յետոյ լուսարա-րապետ Հեռնդ եպիսկոպոսի հետ տուն առ տուն ասա-ցին «Ուրախ եղէ ես» սազմոսը, որից յետոյ Առքիաս արքեպիսկոպոսը, իբրի աւագագոյն անդամը ամբողջ միա-բանութեան մէջ, բարի վերապարձի ճառ խօսեց՝ ասելով մոտաւորապէս հետեւեալը. «Վեհափառ Տէր, ուղիղ 28 օր սրանից առաջ Զերդ Վեհափառութիւնը բարեհաճեց նոյն հանդիսաւորութեամբ Մայր Տաճար իջնել աղօթելու և մենք բաղդ ունեցանք Զեղ ճանապարհ դնելու Ս. Պետեր-բուրգ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին ներկայանալու համար, այսօր 28 օր յետոյ կրկին բախտ ենք ունենում Զերդ Վեհափառութեանը ողջմամբ վերա-դարձած տեսնել։ Այս սրբազն կամարների տակ ամ-բողջ միաբանութեան կողմից՝ չնորհաւորելով Զեր բարի վերապարձը՝ կմազթեմ առ Բարձրեալն Աստուած, որ Զերդ Վեհափառութեանը տայ երկար կեանք, ոյժ և տոկոնու-թիւն տանելու այն ծանր լուծը, որ Զեղ բաժին է ըն-կել։ Առքիաս սրբազնի ճառից յետոյ միաբանութիւնը Կաթողիկոսին առաջնորդեց Վեհարան։

26-ի երեկոյեան վանքի բակում հրավառութիւն կար-թաց թողնուեցին նաև շատ գոյնզգոյն հրանօթներ, որոնք իրենց թէք և ուղղահայեաց ուղցումներով, իրենց տրաք-տրաքոցներով և հրային անթիւ զանգուածների ու կայ-ծերի բաժանումովը ահագին բաւականութիւն էին պատ-ճառում մինչև ուշ գիշեր զբօսնող հասարակութեանը։

27-ին Նորին Վեհափառութիւնն ընդունեց վանքի միաբանութեանը և պատմեց նրանց Պետերբուրգի իւր ոյցելութիւնների մասին և մասնաւորապէս այն մասին, թէ ինչ հարցեր է շօշափել մինիստրների նախագահին, արդարադատութեան և Ներքին Դորժոց մինիստրներին

ներկայանալիս։ Միաբանութիւնից յետոյ Վեհին ներկայացան Սինօդի ծառայողները, քահանայական դասը և Վաղարշապատի հասարակութեան ներկայացուցիչները։ Նորին Վեհափառութիւնը բոլորին էլ սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց և յայտնեց իւր գոհունակութիւնը։

Վեհափառի եկած օրուանից ժողովուրդը արդէն սկսել էր գալ Էջմիածին տեսնելու հայարապետական Օծումը որ նշանակուած էր յուլիսի 1-ին, Վարդավառի օրը։ 29-ից սկսեցին պատգամաւորները գալ, պատգամաւորների և պատուաւոր հիւրերի ընդունելութեան համար վանքում կազմուած էր կարգադրիչ յանձնաժողով՝ ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի նախագահութեամբ, անդամներն էին Սիօն վարդապետ և Ռուբէն արեղայ Մանասեան։ Պատգամաւորներին և պատուաւոր հիւրերին որոշուած էր տեղ տալ Ճեմարանի վերին յարկի սենեակներում, սակայն այնքան շատ էին պատգամաւորներն ու հիւրերը, որ ոչ միայն Ճեմարանի ցածի յարկի սենեակները կարիք եղաւ պատրաստելու, այլ և հիւանդանոցն ու ննջարանը։

Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքայի կողմից Օծմանը ներկայ լինելու համար եկել էր Փոխարքայի խորհրդի աւագ անդամ՝ Մ. Հակիել. իսկ զանազան հիմնարկութիւնների, հաստատութիւնների և քաղաքների կողմից եկել էին հետեւալ պատգամաւորները։

- |                           |                                  |                         |                       |
|---------------------------|----------------------------------|-------------------------|-----------------------|
| 1. Պրօֆ. Վարդան Վարդանեան | 2. Պրիվատ-դօցէնտ Նիկողայոս Ադոնց | 3. Արամ Նիկողոսեան      | 4. Գէորգ Խոջաբարսնեան |
|                           |                                  | Եկատերինոգարի հայ հասա- | րակութեանների հոգմից, |

- |                     |                    |  |                                 |
|---------------------|--------------------|--|---------------------------------|
| 5. Յակոբ Տօնականեան | 6. Գրիգոր Պապոյեան | 7. Աւետիս Պօղոսեան                       | 8. Յակոբ Շահնազարեան            |
|                     |                    | Սիսալքալակի բարեգործական չութեան կողմից, | Եկերտուրդ, լուսակութեան կողմից, |

9. Յովսէփի Վախթանգեան Վելիսցիխէ գիւղի (Սղնախի դաւառ.) հայ հասարակութեան կողմից.
10. Յովհաննէս Յովհաննիսեան Ակերմանի հայ հասարակութեան կութեան կողմից.
11. Յարութիւն քհ. Գրիկեան Ախալցխայի հօգեորական նութեան կողմից.
12. Գէորգ Արաբեան Ախալցխայի դպրոցի հոգաբարձութեան ձութեան կողմից.
13. Մինաս Շահնազարեան Եարուրի հասարակութեան կողմից.
14. Վահան Վրդպ. Տ. Գէորգեան Շուշի քաղաքի հոգեութեան բականութեան կողմից.
15. Երդ. Հաւատ. Մանդինեան Շուշութեմ. դպր. հոգաբարձութեան կութեան կողմից.
16. Լ. Վարդապետեան Շուշի քաղաքի հասարակութեան կողմից.
17. Կիրակոս Մովսիսեան Հին-Նախիջևանի հայ հասարակութեան կութեան կողմից.
18. Յովսէփի Միրզախանեան բակութեան կութեան կողմից.
19. Մկրտիչ Պօղոսեան Օրդուքադի հայ հասարակութեան կողմից.
20. Գրիգոր Ղաղարեան Վերին-Ագուլիսի վանքի հոգաբարձութեան կողմից.
21. Աւետիս Ներսիսեան Վեր. Ագուլիսի հայ հասարակութեան կողմից.
22. Արիստակէս Աւագեան Օշականի ծխ. դպր. հոգաբարձութեան ձութեան կողմից.
23. Եղիշէ քհ. Տէր Եղիաղարեան Մուխումի շրջանի հայ.
24. Պիմէն քհ. Կարաքէնեան սարակութեան կութեան կողմից.
25. Մանուկ Խաչատրեան Հին-Նախիջևանի հոգեուր կառավարութեան կողմից.
26. Ա. Ամիրեան Աղէքսանդրապօլի քաղաքային վարչութեան կութեան կողմից.
27. Խ. Խաչակեան Հոգեորականութեան կութեան կողմից.
28. Յակոբ քհ. Խաչվանքեան Աղէքսանդրապօլի վիճակի հոգեուրականութեան կութեան կողմից.

29. Տիկ. Նատալիա Տ. Մարտիրոսեան } Աղէքսանդրապոլ  
Սահականուշեանի  
գպրոցի հոգա-  
բարձութեան կ.
30. Թագեռոս Խղմալեան } Ա. Փրկչի եկեղեցու կողմից.
31. Գրիգոր Արվազեան } Բէջղազլուի (Երևանի գաւառ.)  
ուսումն. հոգաբարձութեան կ.
32. Միքայէլ Պապաջանեան } Բագուի Մարգասիր. ընկե-  
րութեան կ.
33. Մարգիս Տէր Գաբրէլեան } Երևանի Մարիամեան դըպ-
34. Աշակերտ Ճարակեան } բոցի հոգաբարձութեան կ.
35. Գեղեցոն Ահարոնեան } Երևանի Թեմ. գպր. հոգաբարձ-  
ութեան կողմից.
36. Վաղինակ քհ. Գրոյեան } Կարսի հոգեոր կառավա-  
րութեան կողմից.
37. Կ. Գիւնազարեան } Կարսի գպր. Մանկավ. խմբի  
կողմից.
38. Կ. Սերոբեան } Տփխիօի կաթուղիկոսա-
39. Աղէքսանդր Մելիք Աղարեան } կան ընդունելութեան  
յանձնաժողովից.
40. Մ. Կօժեղիկեան } Մողղոկի հայ հասարակութեան
41. Կ. Նաւասարդեան } կողմից.
42. Աշոտ քհ. Թեմուրազեան } Տփխիօի Հոգեօրականու-  
թեան կողմից.
43. Եղիշիկ քհ. Դիլանեան } Թալինի Գործակալութեան կ.
44. Մ. Գէորգեան } Թալինի Գործակալութեան կ.
45. Աբրահամ քհ. Ղազազեան } Ախալցխայի հոգեօրակա-  
լա. թեան կողմից.
46. Աղէքսանդր Բահամեան } Բագուի կուլտ. Միութեան
47. Սամսոն Ղազազեան } Բագուի կուլտ. Միութեան
48. Սիրական Տ. Մարտիրոսեան } Պետիգորսկի հայ հա-  
սարակութեան կողմից.
49. Գիւտ քհ. Աղանեան } Հաստարակութեան Վանուց  
եկեղեցւոյ թանգարանի կ.
50. Թագեռոս Տօշեան } Ղազախի գաւառի մի քանի հայ  
գիւղերի հասարակութիւնների կ.
51. Գէորգ Տ. Մկրտչեան } Արմեանուկի Բազարի հայ հա-  
սարակութեան կողմից.

Իսկ բազմաթիւ հիւրերից կարելի է յիշատակել տիկ. Պապաջանեան, Բագուից եկած մի անգլիացի քահանայ, Վիեննայի Մխիթարեան միաբանութեան անդամ՝ հ. Ներսէս Ակինեան, Երևանի գիմնազիայի դիրեկտորը, Փանահյան Մակինսկի Աղախան Էրիվանսկի և ուրիշները.

Հայ պարբերական մամուլից ներկայացուցիչներ ունեին «Ախուրեան»՝ Գեղամ՝ Արմէն, «Արագած»՝ Վաղարշակ Տ. Խաչատրեան, «Հորիզոն» տեղտկան թղթակից Թ. Մարուխանեան (Թագէոսեան), «Կռան»՝ Մուշեղ Բագրատունի, «Աղբիւր—Տարագ»—Յովհաննէս Յովհաննիսեան. «Խաթարալա»—Սարիբէդ Տէր Մելքիսեդեկեան (Ղալայշի Մարգար). «Մշակ»՝ Վահան քն. Աղաղատեան (տեղական թղթակիցը). Բացի հայ թերթերից յատուկ թղթակիցներէին ուղարկել «Русское Слово», «Кавказъ» և Զակավազьеն.

Կաթողիկոսական Օծման կարգը իսկապէս սկսուեցամսի 30-ից՝ շաբաթ օրը. այդ օրը առաւօտեան ժամը 9-ին պատգամաւորները հաւաքուեցին Վեհարանի պարտէզը Վեհափառ Հայրապետին ուղեկցեցին գէպի տաճար պատարագին ներկայ լինելու և երգուելու համար. Պատարագին էր Շամախու թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանը. Պատարագից յետոյ Վեհափառը մօտեցաւ Խջման սեղանի առաջ գրած կանաչ գահաւորակի որի վերայ կային խաչն ու աւետարանը և երկու մատը գէպի վերև բարձրացրած կարդաց երդման թուղթը ի ներկայութեան ամրող միաբանութեան, Փոխարքայի ներկայացուցիչ Մ. Հակիէլի, Սինօդի բոլոր անդամների, որոնք գուրս էին եկել միաբանութեան ընդհանուր շարքից և առաջացել գէպի Վեհափառ Հայրապետը, Սինօդի պրօկուրօր Մելք-Օհանջեանի, Սինօդի առենադպիր Յովհաննէս Յովհաննիսեանի, բոլոր պատգամաւորների և բազմաթիւ աղօթող ժողովրդի. կարդալուց յետոյ ստորագրեց. Վեհափառից յետոյ ստորագրեցին՝ լուսարարապետ Ղեոնդ Եպիսկոպոսը, իբրև երդմանեցնող, ապա Սինօդի անդամները աւագութեան կարգով, իսկ ամենից վերջը ատենադպիրն ու պրօկուրօրը. Պատարագից

յետոյ Նորին Վեհափառութիւնը բարձրացաւ Վեհարան։  
 Նոյն օրը կեսօրից յետոյ ժամը  $4\frac{1}{2}$ , Երեկոյեան ժամերգութիւնից առաջ «Երրորդի» կոչուած կոչնակի ձայնը ամբողջ միաբանութեանը հրաւիրեց եկեղեցի, իսկ պատգամաւորներին վեհարանի պարտէզ։ Միաբանութիւնը զգեստաւորուած դուրս եկաւ Տաճարից և սպասեց Վեհարանի դարբասի մօտ. շուտով իջաւ Վեհափառը, շուրջառ առաւ և մտաւ ամպհովանու տակ. «Հրաշափառ» շարականն երգելով թափօրը առաջ շարուեց. թափօրի ժամանակ խնկարկում էին չորս սարկաւագներ, իսկ ուրիշ չորս հոգի էլ առաջուց տանում էին հայրապետական քօղը. ժամերգութիւնից յետոյ հոգեսոր դասը առանց շուրջառի Հայրապետին տարաւ Վեհարան։ Երեկոյեան ժամը 9-ին Տաճարումն հայրապետական հսկումն կար, իսկ վանքի բակում՝ հրավառութիւն։

Կիւրակի առաւօտից վանքի բակը լիքն էր ժողովը-դով. շրջակայ գիւղերից և Երևանից այդ օրը ահագին բազմութիւն էր եկել, որովհետեւ կիւրակին տօնի կենդրոնն էր կազմում։ Այդ օրը պատարագիչը ինքը Նորին Վեհափառութիւնն էր. ժամը 9-ին պատգամաւորները հաւաքուեցին վեհարանի պարտէզը՝ Վեհին եկեղեցի առաջնորդելու հանդիսաւոր թափօրին մասնակցելու համար, իսկ ժողովուրդը խռնուել էր վանքի բակում։ Թափօրը այսպէս էր կազմուած Վեհարանից մինչև եկեղեցու դուռը բացուած էր լայն ճանապարհ. ժողովուրդը կենդանի պատնէշ էր կազմել, որի առաջ խաղացումը կանգնեցնում էր զինուորների վաշտը ոստիկանութեան ղեկավարութեամբ։ Բացուած ճանապարհի առաջին մասում՝ կանգնած էր Երգեցիկ խումբը՝ Ռուբէն արեղայ Մանասեանի ղեկավարութեամբ. երգիչների մօտից սկսած մինչեւ վեհարանի դարբասի մօտ կանգնած էր հոգեսոր դասը՝ Երկկարգ. Երգիչների ետեւից գալիս էին շաթիլները, ապա խաչ ու խաչվառակիրները, իսկ սրանց հետեւում էին հայրապետական խաչն ու գաւաղանը կրող վարդապետները՝ զոյգկազմած, ապա հայրապետական քողակիր քահանաները,

այնուհետև հայրապետական ամպհովանին էր գալիս, իսկ ամպհովանու 4 կողմից 4 քշոցակիր քահանաներն էին գալիս Կաթուղիկոսի յետելից գալիս էին գաւազանակիր Բադրատ վարդապետը և լուսարարապետ Ղեօնդ եպիսկոպոսը Ամպհովանու մօտից սկսած գէպի առաջ հոգեուրական գասքն զուգահեռական՝ կանգնած էին աւագութեան կարգով 12 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ զգեստաւորուած՝ ձեռքերին եպիսկոպոսական խաչ ու գաւազան բանած, աջ կողմից գնում՝ էին՝ Սուքիաս արքեպիսկոպոս Պարգեան (աւագագոյն անդամը միաբանութեան մէջ) Անանիա արքեպիսկոպոս Համազասպեան (Շամախու թեմի առաջնորդ), Ատհակ արքեպիսկոպոս Այվատեան (Պարսկա Հնդկաստանի նախկին առաջնորդ), Միփթար եպիսկոպոս Տ. Մկրտչեան (Աստրախանի թեմի առաջնորդ), Մեսրոպ եպիսկ. Տ. Մովսիսեան (Սինոդի անդամ) և Եփրեմ եպ. Սուքիասեան (Ժամ. կառավարիչ Վրաստանի և Խմերեթի թեմի), Ճախ կողմից՝ Ներսէս արքեպիսկոպոս Խուտավերգեան (Թեմակալ առաջնորդ Բեստրաբիայի), Յուսիկ արքեպ. Մովսիսեան նախանդամ Սինոդի), Ատրգիս եպս. Փիլոյեան (Վանահայր Սիանայ վանքի), Աշոտ եպիսկոպոս Շախեան, Կարապետ եպս. Տէր Մկրտչեան (առաջնորդ Ատրապատականի) և Խորէն եպս. Մուրատքեան (Փոխ-Թեմակալ Երևանի թեմի): Աւղիզ ժամը 9 $\frac{1}{2}$ -ին, երբ Վեհափառը՝ նոյնպէս զգեստաւորուած՝ մտաամպհովանու տակ, որ կրում էին պատգամաւորներից՝ պրօֆ. Վարդան Վարդանեան, պրիվ. դօց. Ն. Ագոնց, Ալէք. Մելիք-Աղարեան և Առշ. Մելիք-Ղարաբեօղեան, Հնչեցին եկեղեցու զանգերը և եկեղեցական թափօրը առաջ շարժուեց «Թորհուրդ խորին» երգի հնչիւնների տակ ճանապարհի մէջ տեղով գալիս էր Նորին Վեհափառութիւնը՝ վրան քցած նոր թանկագին շուրջառ, քղանցքները հաւաքում էին 2 քղանցքակիր վարդապետները: Տեսարանը շատ լին էր և տպաւորիչ, ժողովուրդը ռայր զարամը ելտնէին» տեսնելու համար, տասնեակ տեղերում դրուած լուսանկարչական զանազան տեսակի մեքենաների կողքե-

րին կանգնած նկարիչները աշխատում էին մի վարկեանում՝ արձանացնել ապակու վերայ կաթուղիկոսական հանգիսաւոր երթը. ժողովրդական հոսանքը կանգնեցնելու համար մեծամեծ ջանքեր էր պահանջւում։ Այսպիսի հանգիսաւորութեամբ զգեստաւորուած եպիսկոպոսների առաջնորդութեամբ Վեհափառը կանգ առաւ առագ սեղանի բեմի առաջ. այստեղ կատարուեց լուսացման կարգը։ «Ողորմեացի»-ն ասաց Առքիաս սրբազանը թագը վերցրած. ապա երկու վարդապետներ «Դատ արա ինձ, Աստուած» սաղմօսը տուն առ տուն ասելով՝ բարձրացան առագ սեղանը, որից յետոյ բարձրացաւ Վեհափառ Պատարագից, իսկ 12 եպիսկոպոսները բարձրացան հիւսիսային կողմի առնդուիներով և սեղանի երկու կողմերում կարգով տեղ բռնեցին՝ վեցը աջից, իսկ միւս վեցը՝ ձախ կողմից։ Սկսուեց պատարագը։ «Զի ողորմած և մարգասէր եւ Աստուած գոլով»-ից յետոյ Վեհափառը կանգնեց սեղանի կենդրոնում և բարձր ձայնով կարդաց հետեւեալ երդման թուղթը. «Քէորդ ծառայ Յիսուսի Քրիստոսի և միարան սրբոյ ուխտիս Եջմիածնի, կամօքն Աստուածոյ և ընտրութեամբ համօքն ազգիս Հայոց կոչեցեալ յԱրարատեան Աթոռ Կաթուղիկոսութեան ամենայն Հայոց, ապաւինեալ յօդնականութիւն շնորհաց Բարձրելոյն՝ խոստանամ և ուխտեմ առաջի որբոյ սեղանոյս և աստուածըն կալ սուրբ նշանացո, յանձն առնուլ զպաշտօնս զայս եպիսկոպոսապետութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, և ըոլուրապտուղ նուիրմամբ ընծայել զանձն իմ յանվթար կատարումն աստուածադիր օրինաց և կաթուղիկոսական պարտոց, և առաջնորդել ազգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան Քրիստոսական կրօնից, ըստ մերոյս եկեղեցւոյ գաւանութեան և ըստ Հայրապետական կարդաց և կանանաց Աստուածապաշտութեան, անստերիւր և անխոտոր ընթանալով յամենայնի ընդ լուսաշաւիդ հետս գնացից արժանաժառանգ Յաջորդաց սրբոց առաքելոցն Յաղէսոսի և Բարդուղիմէսոսի և որբոյ Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչի զգուշաւոր պահպանութեամբ իրաւանց Մայր

Աթոռոյս Հայաստանեայցա»։ Այս թղթի ընթերցումից յետոյ Վեհափառը նոյն տեղում ծունկ չոքեց՝ երեսը գէպի ժողովուրդը դարձրած, իսկ 12 եպիսկոպոսները շրջապատեցին նրան։ Արիստակէս ու Խորէն վարդապետները միքանի տուն սաղմոս կարգացին, իսկ Սահակ արքեպոս «Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած» քարոզն ասաց, որից յետոյ Սուքիաս սրբազանը կարգաց հետեւալ ազօթքը. «Աստուածային և երկնաւոր շնորհն, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զԳէորգ արքեպիսկոպոսն յԵպիսկոպոսութենէ ի Կաթուղիկոսութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ՝ ի Հովուապետութիւն և յԱռաջնորդութիւն ընդհանուր Ազգիս Հայոց՝ ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեանս»։ Յոլոր 12 եպիսկոպոսները միանգամից գնում են ֆեռքերը Հայրապետի գլխին և միասին բառ առ բառ ասում. «Մեք դնեմք ձեռս ի վերայ և Դուք ամեննեքեան ազօթս արարէք.» որից յետոյ Կաթուղիկոսը վեր կացաւ և շարունակեց պատարագը. «Հաւատամք»-ից առաջ եղած աւետարանն ու «Հաւատամքը» Աշոտ սրբազանը կարգաց, որ իւր հուժկու և թաւ ձայնով այնպիսի ուժգին տպաւորութիւն թողեց ժողովրդի վերայ, որ ժխորը դադարեց եկեղեցում։ Վերաբերումը արեց Խորէն սրբազանը, այսպէս շարունակուեց մինչև «Աղջոյնու-ը, որից առաջ Կաթուղիկոսը կրկին չոքեց նոյն աեղում. այդ ժամանակ Սուքիաս արքեպիսկոպոսը վերցրեց սեղանից Միւռոնի Աղաւնին և բոլորի ձայնակցութեամբ երգելով «Առաքելոյ աղաւնոյ» շարականի առաջին տունը՝ թափեց ո. միւռոնը Հայրապետի գլխին. այդպէս կրկնեց Յ անգամ. իսկ 12 եպիսկոպոսները բութ մատներով խաչաձև դրօշմում էին միւռոնը գլխին զանազան կողմերից՝ միաժամանակ ասելով «Օ՛հնեսցի, օծցի և սըրբեսցի գագաթ Տէր Գէորգ Կաթուղիկոսի» ազօթքը. Օծումից յետոյ քցեցին Կաթուղիկոսի գլխին Հայրապետական սպիտակ քօղը և բաղմախաչ նափորտը, աջ կողմից գօտուց կապեցին կոնքեռը և ձեռքը տուին Հայրապետական գաւազանը, որը կոչւում է «Լուսաւորչի գաւազան»։ այս

բոլորից յետոյ միայն, ինչպէս օծման կանոնի մէջ է առուած, Հայրապետը կոչում է Ամենայն Հայոց Կաթուղիկոս։ Այսուհետեւ կարգացուեց մի գլուխ աւետարան, որից յետոյ համբուրեցին Օծեալի գագաթը և «Աղջոյն» ասացին։ Օծեալ Հայրապետը վեր կացաւ տեղից և շարունակեց պատարագը, իսկ եպիսկոպոսները նոյն կարգով կանգնած մնացին բեմի վերայ մինչև պատարագի վերջը։ Պատարագից յետոյ հանդիսաւոր կարգով առաջնորդեցին Նորին Ա. Օծութեանը վեհարան, երբ Վեհափառը մտաւ «Մազկեալ Դահլիճ»-ը դպիրները «Այսօր Քահանայապետ ճշմարիտ» շարականն երգեցին, որից յետոյ սարկաւագն ասեց «Սուրբ խաչիւս» քարոզը, իսկ Վեհափառը պահպանիչ ասելով օրհնեց բոլորին և նստեց Հայրապետական Գահը. ամենը հերթով մօտեցան և համբուրեցին նորապասակ Հայրապետի աջը՝ սկսած արքեպիսկոպոսներից, ամբողջ միաբանութիւնից, Փոխարքայի ներկայացուցչից, վերջացրած պատգամաւորներով և ուրիշ շատ մասնաւոր անձերով։ Ընդունելութիւնը վերջացաւ ժամը 1-ին։

Նոյն օրը ժամը 3-ից վանքի սեղանատանը հանդիսաւոր ճաշկերոյժ կար Նորին Ա. Օծութեան ներկայութեամբ հրաւիրուած էին ամբողջ միաբանութիւնը, Փոխարքայի ներկայացուցիչ ալ Ա. Հակիել, պատգամաւորներն ու պատուաւոր հիւրերը, ճշմարանի ուսուցիչներն ու պաշտօնեաները, Սինօդում ծառայողներն ու Օծմանը եկած քահանայական դասը՝ մօտ 220 հոգի. Ժամը 3-ին Նորին Վեհափառութիւնը սեղանատուն իջաւ և տեղ բռնեց կաթուղիկոսների համար յատկապէս շինած տեղում. ապա աջ կողմից նստեցին միաբանութեան անդամներն աւագութեան կարգով, իսկ ձախ կողմից՝ հիւրերը համարական կարգով. առաջին աթոռը յատկացրած էր Փոխարքայի ներկայացուցչին. ապա գալիս էին հերթով՝ Երևանի գիմնազիայի գիրեկտորը, Սինօդի պրօկուրորը, պրօֆ. Վարդանեանը, պրիվ. դօց. Ագոնցը և միւսները, որոնց թւում Երևանից եկած պարսիկ Փանահ-խան Մակինսկին և Աղախան Էրիվանսկին. դրսում նուագում էր երաժշտական խումբը։

Նորին Վեհափառութիւնը ստքի կանգնելով առաջին  
բաժակը առաջարկեց Հայոց եկեղեցու Բարձր Հոգանաւոր  
Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսր Նիկոլայ  
II-ի կենացը և օրհնեց Նորին Մեծութեանը. սեղանատան  
կամարները լժնդացին երիցս կրկնուող ուռաների տակ,  
իսկ դրսում զինուորական երաժշտախումբը նուագեց կայ-  
սերական օրհներգը՝ Եօն, Շար Խրան. Երկրորդ անդամին  
Վեհափառն առաջարկեց երկու Կայօրուհիների և Թագա-  
ժառանդի կենացը. այդ կենացներն ևս ընդունուեցին մեծ  
ոգերութեամբ. կրկնուեց կայսերական հիմնը. Փոխար-  
քայի ներկայացուցիչ Մ. Հակիկին առաջարկեց Նորին Վե-  
հափառութեան Ամենայն Հայոց Կաթուղիկոս Գէորգ. Ե-ի  
կենացը. օդը թնդաց կեցցէների և ուռաների ազաղակնե-  
րից. երաժշտախումբն երգեց Կոյ ուսան՝ օրհներգը. որից  
յետոյ Հմայեակ վարդապետը երգեց «Տէր, կեցն զՀայս»,  
իսկ Սիօն վարդապետը կարդաց գրաբառ լեզուով գրած  
ձօն. Զարբորդ բաժակը Կաթուղիկոսն առաջարկեց Փո-  
խարքայ Կոմս Հօրօնցով Դաշկովի և ապա նաև Նորա օգ-  
նական գեներալ Շատիլովի կենացները. այս կենացներն  
էլ ընդունուեցին ուռաներով և երաժշտութեամբ. Հետե-  
ւեալ կենացը Փոխարքայի ներկայացուցիչ պ. Մ. Հակիկի-  
լինն էր և ապա Էջմիածնի միաբանութիւնը՝ երկուոն էլ  
առաջարկուած Վեհափառ Հայրապետի կողմից. Էջմիածնի  
կենացի վերայ յոտնկայս երգուեց «Էջմիածնն ի Հօրէ»  
գեղեցիկ շարականը, այնուհետեւ առաջարկուեցին մի քանի  
ուրիշ կենացներ, որոնցից յետոյ Նորին Վեհափառութիւնը  
մելինեց. Առքիաս արքեպիսկոպոսը առաջարկեց ներկայ  
եղող պատգամաւորների կենացը. ապա առաջարկեց ի գի-  
մաց Փանահ-խան Մակինսկու թուրք համայնքի կենացը,  
ինչպէս և ներկայ սուս պաշտօնեաների կենացը. Բագուի  
պատգամաւոր Միքայէլ Պապաջանեան առաջարկեց Էջ-  
միածնի միաբանութեան կենացը. Աշոտ եպօ. առաջարկեց  
ներկայ գտնուուղ տիկինների կենացը, իսկ Վիեննայի Միհի-  
թարեան միաբանութեան անդամ հ. Ներսէս Ակինեանը,  
համառօտ ատենաբանութեամբ բացաւրելով Էջմիածնի

նշանակութիւնը համայն հայերի համար, առաջարկեց կըս-  
կին անգամ Եջմիածնի և նրա յարատեռութեան կենացը:  
Ժամը 5 ին վերջացաւ պաշտօնական ճաշկերպյթը:

Երեկոյեան հրավառութիւն կար վանքի բակում. հա-  
րիւրաւոր գոյնզգոյն ելեկտրական լամպիկները և զինուո-  
րական երաժշտախմբի նուագածութիւնը ահագին բաւտ-  
կանութիւն էին պատճառում հասարակութեանը. Ժողո-  
վորդը հաւաքուած վեհարանի առջև անընդհատ կեցցէ-  
ներ էր բղաւում և խնդրում էր Խորին Ա. Օծութեանը  
երեալ լուսամուտի առջև և օրհնել իրեն. միայն մի ան-  
գամ Վեհափառը բարեհաճեց գալ լուսամուտի առաջ և  
խաչակներ ժողովրդին. Ժողովրդի ուրախութեանը շափ  
ու սահման չկար, երբ լուսամուտում երեաց կաթուղի-  
կոսը, մինչեւ ուշ գիշեր ժողովուրդը չէր ուզում բաժա-  
նուել վեհարանից ու վանքից:

Երկուշարթի, յուլիս 2-ին մեռելոց էր. պատարագ  
կար, պատարագին էր Խորէն եպօ. Մուրագրէգեանը,  
պատարագից յետոյ կատարուելու էր ի Տէր հանգուցեալ  
Մատթէոս Ա կաթուղիկոսի համար հոգեհանգիստ և տա-  
պանաբարի օրհնութիւն. պատարագից յետոյ միաբանու-  
թիւնը՝ գլուխ ունենալով Վեհափառ Հայրապետին՝ եկաւ,  
շրջապատեց հանգուցեալ Մատթէոս կաթուղիկոսի գերեզ-  
մանը, հոգեհանգիստ կատարեց և տապանաբարն օրհնեց:  
Հոգեհանգստից յետոյ միաբանութիւնն կաթուղիկոսին  
առաջնորդեց Վեհարանն ժողովուրդը, որ Օծումից յետոյ  
հետզհետէ սկսել էր թողնել Եջմիածինը, այսօր շատ քիչ  
էր. կամաց կամաց մեկնում են և պատգամաւորներն.  
Վաղարշապատը կրկին ստանում է իւր նախկին տեսքը.

## Ա. 2.

1912 թ. 6-ն յուլիսին  
Ա. Եջմիածին: